Արձանագրություն N 3

«ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/6» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով «Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի կոյուղագծերի վերակառուցման աշխատանքներ»-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 02 հոկտեմբեր 2023թ.
ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ոսկան Եղիազարյան
Հանձնաժողովի անդամներ՝
համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի պետ Արա Մեսրոպյան/գնահատող անդամ/,

համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ Գոռ Առաքելյան /գնահատող անդամ/,

համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձանակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության հարցերով կազմակերպպիչ/ Սամվել Ալոյան /բացող անդամ/,

համայնքի ղեկավարի խորհրդական Գուրգեն Հակոբյան /բացող անդամ/:

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. *Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին*

Ընդունել ի գիտություն, որ

1.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:.

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **«Աննար» ՍՊԸ և «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ կոնսորցիումի, «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ և «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊԸ կոնսորցիումի, «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «ԱԴՐԻՆՇԻՆ» ՍՊԸ-ի** հայտերը գնահատել՝ **բավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. *«ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի մասին*

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ ***«ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/6»*** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել՝ **«Աննար» ՍՊԸ և «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ կոնսորցիում**-ը՝ որպես հրավերի պահանջները բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. *«ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների ամփոփման մասին*

Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.2 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է <<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի /10 օրացուցային օր/ ավարտին հաջորդող 4-րդ աշխատանքային օրը ծանուցումն ուղարկվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Անգործության ժամկետի ավարտից հետո՝ պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել **10 աշխատանքային օրվա ընթացքում** ներկայացնել **պայմանագրի ապահովում՝ գնման**

գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 տոկոսի չափով: Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվում են՝ բանկային երաշխիքի կամ կանխիկի փողի ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Նախագահ՝ Ոսկան Եղիազարյան	
Անդամներ՝ Արա Մեսրոպյան	
Գուրգեն Հակոբյան	
Սամվել Ալոյան	
Գոռ Առաքելյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	